

# ԱԴԱՄ ՊԵՆՏԵՆԱՑԻ

## ԽՈՆԱՐՈՒԹԵԼՆ ԵՒ ԼԻՈՒԹԵԼՆ ՄԱՍԻՆ

Կաճակ ԺԹ., Կաճակ ԻԹ.



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

Ê Ø ´ ² ¶ ð à ô Â ° ² Û Î à Ô Ø Æ ò

*Սիրելի Ընթերցող,*

*օգտագործելով Հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախա-  
ձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր  
կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրու-  
թիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու  
առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց  
Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս  
ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս  
համացանցային հասցէն.*

**[gradaran@mashtoz.org](mailto:gradaran@mashtoz.org)**

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանա-  
ցանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւն-  
ների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն  
իւնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացան-  
ցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

*Ø³bi áó ì ³Ñ̃ Ô³½³ñ»³Ÿ*

## Մեր անութիւն

Աղամը (Ֆ1221թ.) ծնունդ է 12րդ դարի կէսին, Ֆրանսիայում, հաւանաբար գիւղացիների ընտանիքում, որոնք ծառայում էին Շամպանյ գաւառի իշխանին: Իր եկեղեցական կեանքի առաջին շրջանում, թերեւս եղել է այդ նոյն իշխանի տան թեմական կանոնականներից մէկը: Յետագայում, Աղամը դառնում է բենեդիկտեան վանական եւ, վերջում, մտնում է Պոնթինյի կիստերսեան վանքը, ուր նշանակւում է նորընծաների վարժապետ: 1188 թուականին ընտրւում է Պեղսէնի կիստերսեան վանքի Աբբասայր եւ այս պաշտօնը վարում է երեսուներեք տարի շարունակ: Իննովկենտիոս Երրորդ Քահանայապետի կողմից յաճախ կանչւում է իշխանների միջեւ խաղաղութիւն հաստատելու եւ վանքեր ու թեմեր բարենորոգելու: 12րդ դարի վերջին, մի ուրիշ քահանայի հետ միասին, քարոզում է խաչակիրների չորրորդ արշաւանքը:

Մեզ են հասել նրա գրչին պատկանող զանազան քարոզներ ու ճառեր (հիմնականում ծիսական տօների վերաբերեալ) եւ նամակներ (յատկապէս հոգեկանութեան նիւթերի վերաբերեալ): Իր ուսուցումները, որոնք իրենց վրայ կրում են մարդեղութեան խորհրդին ընծայուած յատուկ ուշադրութեան կնիքը, հիմնականում պատուում են Սուրբ Հոգու արդիւնաւոր ներգործութեան միջոցով հաւատացեալների կեանքից եւ սրտից ներս Խօսքի ներքնակութեան նիւթի առանցքի շուրջը: Հեղինակը մեծ կարեւորութիւն է տալիս նաեւ Մարիամի կերպարին: Իր բոլոր գործերում, Աղամը հաստատ հիմքերի վրայ է պահում այն գոյացական միութիւնը, որը ներկայ է աստուածաշնչեան մեկնողական արուեստի, հոգեւոր կեանքի եւ աստուածաբանական մշակումների միջեւ, եւ որը մինչեւ այդ դարաշրջանը եղել էր վանական միջավայրների բնորոշ յատկութիւնը. որը, սակայն, միշտ աւելի ու աւելի սպառնալիքների էր ենթարկւում արդէն ծաղկող եկեղեցական համալսարանների ու դպրոցների կողմից:

Երկու նամակները, որ այստեղ հրատարակւում ենք, մեր հեղինակի զգացումների, մտածումների եւ կեանքի միասնականութեան լաւագոյն վկայութիւններից են:

Աղամը, ինչպէս երեւում է նաեւ այս երկու կարճ գրութիւններում, համակարգուած մտածող է, այլ պարզապէս աշխատում է իր հետ երկխօսողներից իւրաքանչիւրին ինչ որ մի բան նուիրել իրեն ի վերուստ տրուած իմաստութիւնից, իւրաքանչիւրի յատուկ կարիքների համաձայն: Առաջին նամակում, իրօք, Աղամն իր խօսքն ուղղում է իր ընկերներից երկուսին, որոնք իրեն շատ մտերիմ էին, իրենք նոյնպէս կրօնաւորներ էին եւ երկուսն էլ կրում էին միեւնոյն անունը (որը, սակայն, անգիտանում ենք): Նամակը շարադրել է մօտաւորապէս 1197-1199 թուականներին, իր այդ երկու ընկերներից մէկի յամառ խնդրանքներին պատասխանելով, որը որոշ ուսուցումներ էր հայցում՝ թէ ինչպէս կարող էր գործնական (կոնկրետ) կերպով ապրել հաւատքը, այսինքն՝ գործադրել «առաքինութիւնը»:

Երկրորդ նամակում, մինչդեռ, որ շարադրել է մօտաւորապէս 1210 թուականին, պատասխանում է Բելէմի թեմի աւագ սարկաւազներից մէկին, ոմն «Գ.», որն իրենից շարադրուած խորհրդածութիւն էր խնդրել լուծութեան մասին:

Ինչ վերաբերւում է հեղինակի կողմից օգտագործուած աղբիւրներին, նախեւառաջ հարկաւոր է նշել Աստուածաշունչը, ապա Օգոստինոսը, Կասիանոսը, Բենեդիկտոսի վանական Կանոնագիրքը, Գրիգոր Մեծը, Յուլիէլմոսը, Բեռնարդոսը եւ էլրեդոս Ռէլուսացին:

Իսկ նիւթերը, որոնց շուրջ Աղամը խորհրդածում է այս երկու նամակներում, հոգեւոր նիւթեր են՝ որ յատուկ կերպով հոգեհարազատ են նրան. խոնարհութիւնը, հեզութիւնը, լռութիւնը, որոնք ~ ինչպէս կը տեսնենք ~ Աղամի համաձայն՝ իրենց լիակատար իրականացումը գտնում են միմիայն սիրոյ այն «օրէնքում», որ նոյն ինքն Քրիստոսի սէրն է, որն օրէնք է ինքն իր համար, որովհետեւ միայն «Քրիստոսի օրէնքն է սիրոյ ճշմարտութիւնը, որ շղթայում ու պարտադրում է, եւ մինչ այն ամէնը՝ որ չար է, ունի վախճան, սէրն անմահ է: Սէրն, իրօք, վախճան չունի. սա՛ է այն սէրը՝ որ միաւորում է մեզ, սա՛ է այն սէրը՝ որ տօն եւ զուարթութիւն է սփռում այն հոգիների մէջ, որոնք երբեք չեն լքում Քրիստոսի ծննդեան խորհուրդը» (Նամակ Գ 32):

# ՆԱՄԱԿ ԺԹ.

Իր միաբանակիցներին :

Ֆանչնարարո՞ւմ է խոնարհո՞ւթիւնն է- Հեղե՞թիւն, է- յոբոբո՞ւմ է կրեւ Տեր՞ջ  
Լ՞-ձը :

Շատ սիրելի եղբայրներիս եւ ընկերներիս ի Քրիստոս, որոնց Քրիստոսի սէրը դարձրել է նաեւ մէկ հոգի, որոնք Աստծոյ շնորհով մասնակցում են մէկ միեւնոյն անուան, մեղապարտ եղբայր Ադամը մաղթում է յարատեւել իրենց անուան վիճակում<sup>1</sup> :

Ձեզնից մէկը բարեպաշտ յամառութեամբ մղում է ինձ որոշ բաներ յիշեցնել ձեզ հոգու առաքինութեան մասին եւ անշուշտ, քանի որ երկուսիդ էլ անկեղծօրէն սիրում եմ եւ քանի որ մեծ անկեղծութեամբ դուք էլ միմեանց սիրում էք փոխադարձաբար, ես նոյնպէս փորձառութիւնը կ'ունենամ եւ կը զգամ թէ ինչպէս մեծ առատութեամբ կը յեղուի իմ մէջ ձեր անկեղծ սիրոյ բարիքը :

Ուրիշ ինչի՞ մասին կարող եմ խօսել ձեր հետ, եթէ ո՛չ միայն այն բանի՝ որն ունի սիրոյ եւ առաքինութեան համն ու բոյրը : Իսկապէս, ինչի էլ որ ձեր ծարաւը արժանացած լինի՝ իմ միջոցով ձեզ յագեցնելու համար տալու, պարտաւոր եմ դուրս քաշել կենդանի ջրերի հորից : Կենդանի ջրերի հորը Քրիստոսն է, անհասանելի լոյսի վիհը, անմերձենալի շնորհի լիութիւնը : Խորն է հորի յատակը, իսկ փոքրութիւնս օժտուած չէ այնտեղ հասնելու համար հարկաւոր գործիքներով, եթէ պարանի փոխարէն՝ աղօթքը անդադար ցոյց չտայ եւ եթէ սափորի նման՝ փափաքը չընկղմի ինձ այնտեղ : Ա՛հ, երանի՜ նրան՝ ով կը կարողանայ այնտեղից ստանալ փրկութեան իմաստութեան յորձանքը : Ցամաք է այն հոգին, որ չի ուռգւում այս հորի ջրով, ո՛չ էլ ընդունակ է առաքինութիւնների գերառատ պտղաբերութեանը : Այս աղբիւրի ջրերը հոսում են դէպի հովիտները եւ սովոր են իրենց քաղցրագոյն հոսանքները խոնարհներին պարգեւելու : Խոնարհ հոգին փորձառութեամբ գիտէ՝ թէ ինչպիսի անուշութիւն ունեն այդ հոսանքները եւ թէ ինչպիսի պտղաբեր առատութեամբ են լցուած այս բալասանով ցողուած սրտերը : Երկնային իմաստութեան հետ քանի՞ցս ընտանի է խոնարհութիւնը, քանի՞ցս արգաւանդ է առաքինութիւնը, քանի՞ցս հարուստ է արժանիքներով, քանի՞ցս ընդունակ է հասու լինելու երկնային իրողութիւնների գաղտնիքներին : Իսկապէս, իր ամբողջ էութեամբ հորի վրայ կքուած, կենդանի ջրերի վրայ ջերմեռանդ ծարաւով խոնարհուած, ուշադրութիւն չի դարձնում այն բաներին, որոնք իրենում չեն բոցավառում կեանքի բաղձանքը : Հորի ջրերն իրօք կենդանացուցիչ են, պարգեւներն են Քրիստոսի բազմակերպ շնորհի : Չուր են, որովհետեւ լուանում են, որովհետեւ զովացնում են, որովհետեւ կազդուրում են. կենդանի են, որովհետեւ կործանում են մահուան գործերը. հորի մէջ են, որովհետեւ բոլորին չեն յայտնում աստուածային ընտրութեան գաղտնիքը եւ այսպիսի ծածուկ տնօրինումների դրդապատճառները : Դրանք, յիրաւի, թաքնուած են իմաստուններից ու գիտուններից եւ յայտնուած են փոքրերին. այո՛, միայն խոնարհներին են տրուած իրական ճանաչողութիւնն ու ըմբռնումը, որոնց արժանի չէ ինքնահաւան հպարտութիւնը : Եւ այնքան երջանիկ է խոնարհութիւնը, որ արժանի է այս ջրերի աւազանում լուացուելու, որպէսզի իրենում չերեւայ եւ չմնայ ապականացու ոչինչ : Արժանի է զովանալու, որպէսզի չտառապի ցերեկուայ արեւից, իսկ գիշերը՝ լուսնից : Արժանի է կազդուրուելու, որեւէ ճակատամարտում հզօր լինելու համար : Ծշմարիտ խոնարհը, իրօք, չի կարող գերծ լինել փորձութիւնների յարձակումներից, յատկապէս որովհետեւ հպարտութիւնը, որ միշտ հակառակ է խոնարհութեանը, աշխատում է հասնել նրա եթէ ո՛չ տեսքին, բայց միշտ՝ փառքին : Անշուշտ, խոնարհութիւնից առաւել փառահեղ ոչինչ չկայ, որի փառքի վսեմ

<sup>1</sup> Ձգիտենք՝ թէ որն է այդ անունը, բայց պէտք է որ արտայայտէր հոգեւոր մի յատկութիւն :

բարձրութիւններին ցանկանում է հասնել հպարտութիւնը որպէս յափշտակիչ-այնուամենայնիւ, չի ցանկանում յափշտակել խոնարհութեան տեսքը, որովհետեւ վերջինս բաւական համեստ է: Բայց երբեմն կեղծում ու ձեւացնում է նաեւ խոնարհութեան տեսքը, երբ առանց նրա չի կարողանում գոռոզանալ. սրա համար էլ, որքան աւելի գաղտնաբար է խարդախութեամբ թաքնում խոնարհութեան դիմակի ետեւում, այնքան աւելի ապահովութեամբ է դիտաւորութիւնը գահավիժում գոռոզութեան ամբողջական յագեցման մէջ:

Սովորեցէք, որդիներ, լինել խոնարհ. եւ սովորեցէք Նրանից՝ ով ուսուցիչն ու օրինակն է այս կրթութեան: Քրիստոսն, իրօք, այս նիւթի ուսուցիչն է, որ ոչ միայն խօսքով ու լեզուով սովորեցրեց, այլ գործերով ու ճշմարտութեամբ ցոյց տուեց՝ թէ ինչպէս պէտք է պահպանել խոնարհութիւնը. «Վերցրէք, – ասում է բարի ուսուցիչը, – իմ լուծը ձեր վրայ եւ սովորեցէք ինձնից՝ որ հեզ եմ եւ սրտով խոնարհ ...»<sup>1</sup>:

Չորս իրողութիւններ, ո՛վ մարդ, դրուած են Նրա կողմից քո առաջ, որպէսզի սովորես, եթէ քաջ ըմբռնում եւ հաստատուն պահպանում ես այն՝ ինչ պատուիրել է: Քո առաջ դրել է՝ թէ ինչ պէտք է սովորես, ումից պէտք է սովորես, ինչպէս պէտք է սովորես եւ ինչի համար: Պէտք է սովորես լինել հեզ եւ սրտով խոնարհ. պէտք է սովորես իրենից՝ որ հեզ է եւ սրտով խոնարհ. սովորելու կերպն ու միջոցը իր լուծը քո վրայ վերցնելն է, իսկ այս բոլորի արդիւնքը՝ հանգիստ գտնելն է հոգուդ համար. « ... եւ կը գտնէք, – ասում է, – հանգիստ ձեր հոգիների համար»<sup>2</sup>: Հետեւաբար, արուեստը՝ որ քրիստոնեան եւ Քրիստոսի աշակերտը պարտաւոր է սովորել, արուեստը՝ որ Քրիստոսի աշակերտին դարձնում է հեզ, կոչւում է հեզ խոնարհութիւն կամ խոնարհ հոգու հեզութիւն: Այս արուեստի ասպարէզում, հմտութիւնը չի կայանում խօսքերի բազմաքանակութեան, ճառերի պերճախօսութեան, խնդիրների բարդութեան եւ վէճերի հակաճառութիւնների, այլ բարի սովորոյթների գործադրման եւ մաքրամաքուր խղճի վկայութեան մէջ:

Հեզութիւնն, իրօք, մեղմացնում է բարքերը, միաւորում է հոգին, չի վնասում ոչ ոքի, չի անհանգստացնում ոչ ոքի, չի յանդուրժում որեւէ մէկի դէմ խօսուած զրպարտութիւններին, վայելք է համարում աշխարհն արհամարհելը: Աշխարհային անցուդարձների ժխորի առաջ տհաճութիւն զգալով, խոլսափում է մեղքի առիթներից: Մուտքը մոլութիւնների առաջ փակելով, մարմնական զգայութիւնների դռները կանոնապահութեան հանդէպ հոգատարութեանը վստահելով, իր հոգում տօնախմբում է անմեղութեան շաբաթ օրը, ներքին անդորրի հանգստի մէջ գուարճանալով: Հեզութիւնը, յիբաւի, մինչ կասկածելի է նկատում այն ամէնը՝ որ գտնւում է դրսում, սովորութեան ուժով արդէն միանում է Նրա ձեռքին՝ ով սփռում է պարզեւներն ի վերուստ, եւ ներսում սպասում է իր սնունդին ու կազդուրմանը: Ընդհատ սրա համար է կոչւում հեզութիւն, իմաստաւորելու համար ձեռքի սովորութիւնը, քանի որ այնքան սովոր է դարձել Քրիստոսի ձեռքին, որ Նրա շնորհից բացի ուրիշ ոչինչ չի փափաքում<sup>3</sup>:

Խոնարհութիւնը, միւս կողմից, հեզութեան անբաժանելի ընկերն է եւ ջանք է գործադրում՝ նրա սրբազան անդորրի հանգստին հասնելու համար: Այստեղից է բխում, որ հալածանքների մոլեգնութեան մէջ, որոնք անխոլսափելիօրէն պէտք է կրի մեծ քանակութեամբ, ամէն բան անում է՝ չզայրանալու համար:

Բայց քիչ է ասելը. «ամէն բան անում է՝ չզայրանալու համար», որովհետեւ աւելի ճիշտ է՝ որ իրական խոնարհութիւնը նեղութիւններում պարծենում է: Պօղոս Առաքեալի խոնարհութիւնը յօժարութեամբ պարծենում էր տկարութիւններում եւ փառք էր համարում միմիայն այն՝ որ օծուած էր Քրիստոսի խաչի բոյրով. «Քաւ լիցի ինձ, – ասում

<sup>1</sup> Մտթ 11, 29

<sup>2</sup> Մտթ 11, 29

<sup>3</sup> Լատիներէն «mansuetudo» («հեզութիւն») բառը Ադամն այստեղ մեկնաբանում է որպէս բաղկացած «manus» («ձեռք») եւ «suetudo» («սովորութիւն») բառերից, մատնանշելու համար ձեռքի սովոր կամ վարժ լինելը, սովորութիւնը՝ միշտ պարզուած լինելու դէպի Քրիստոս, որից ստանում է շնորհ եւ կեանք:

է, – պարծենալ, եթէ ո՛չ միայն՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչով»<sup>1</sup>: Ինչպէս որ հեղութիւնն իր ուժերը նորոգում է անմեղութեան մէջ, այնպէս էլ խոնարհութիւնը վստահում է համբերութեանը, որի միջոցով լիակատար ուրախութիւն է համարում, երբ ընկնում է զանազան փորձութիւնների մէջ: Հետեւաբար, նաեւ ինքը խոնարհութիւնը, սեփական անուան ծանրութեան ներքոյ կքուած, ուրախանում է՝ երբ հաւասարում է հողին<sup>2</sup>: Խոնարհութեան համար որեւէ փառաւորում կասկածելի է. քանի որ չի ամաչում հողին հաւասար մնալուց, չի ամաչում հող ու մոխիր խոստովանուել, այնպէս՝ որ ընտրած լինելով ամենացածր տեղը, մի օր կանչուի փառքով զբաղեցնելու աւելի արժանաւոր մի տեղ: Գրուած է, իսկապէս. «Ով խոնարհեցնում է իր անձը՝ կը բարձրացուի»<sup>3</sup>: Հողին հաւասար մնալով, չի վախենում գայթակղութիւնների փշերից, ո՛չ էլ փորձութիւնների որոգայթներից, որոնք իրեն խայթելու համար՝ բաւական ստէպ բուսնում են հողից: Այսպիսով, հողին հաւասարուելով՝ կոտրուում ու փշրուում է եւ զղջման արդիւնքները բերկրանք են պատճառում նրան, որ ոտնակոխ է եղել, այն աստիճան՝ որ ցնծութեան աղաղակներ է արձակում ու ասում. «Զղջացած ու խոնարհուած սիրտը, ո՛վ Աստուած, չես արհամարհում»<sup>4</sup>:

Վա՛յ ինձ, թշուառիս: Վա՛յ ինձ, դժբախտիս: Այս արուեստից զրկուած եւ մարգարէական այս երանելի բառին անձանօթ, կրում եմ սրտի անմաքրութիւնն ու արարքների ամբարշտութիւնը: Զգում եմ, որ տակաւին նրանց շարքում եմ, որոնց Աստծոյ Հոգին յանդիմանում է մարգարէի միջոցով. «Մարդկանց որդիներ, մինչեւ ե՞րբ էք մնալու կարծրասիրտ: Ինչո՞ւ էք սիրում ունայնութիւնը եւ փնտռում կեղծիքը»<sup>5</sup>: Կապարէ սրտի կարծրութիւնը եւ բազում երեսներ ունեցող սէրը, որ յատուկ է ունայնութեանը, կեղծ բերկրանքի խաբէութեան մէջ՝ հաճոյք են առաջացնում ինձնում: Ըշմարտութեան ծառայութեան մէջ եմ, այո՛, բայց երեւութապէս, եւ վախենում եմ՝ թէ ճշմարտապէս չունեմ աստուածապաշտութեան եռանդը: Աղօթեցէք մեծ յարատեւութեամբ, հսկեցէք մեծ յարատեւութեամբ ու մեծ հոգատարութեամբ, որպէսզի ընկերոջ հանդէպ ձեր սէրը չապականուի նրա հանդէպ սակաւ յարգանքով:

Բայց մեր հայեացքներն այլեւս դարձնենք, ինչպէս լեզուով՝ այնպէս էլ յուսանք հոգիով, դէպի ուսուցիչը՝ որից պարտաւոր ենք սովորել: Այդ ուսուցիչը նոյն ինքն Աստծոյ Իմաստութիւնն է, հեղինակն է գոյութիւն ունեցող ամէն ինչի, որ ամէն ինչի տուել է էութիւն եւ կերպարանք: Ամենակարող Խօսքն է, որ մարդկանց սովորեցնում է ճանաչողութիւնը: Հօր Միածինն է, մեր Կոյսի առաջնեկը, որ գոհերից աւելի նախընտրում է ողորմութիւնը: Իրօք, լի է շնորհով եւ ճշմարտութեամբ, Նա՝ որից իւրաքանչիւր կենդանի էակ ստանում է օրհնութիւնը, ինչպէս գրուած է. «Օրհնութեամբ լիացնում է կենդանի ամէն էակ»<sup>6</sup>:

Ուսուցչի վերաբերեալ հարկաւոր է քննել հետեւեալը. որտեղի՞ց է եկել, ի՞նչ է ասել, ինչպէ՞ս է ապրել եւ ինչե՞ր է կրել, ո՞ւր է գնացել, ի՞նչ է խոստացել, ի՞նչ է սպառնացել: Նա եկել է Հօր սրտից, ինչպէս որ Հայրն ինքը հաստատում է՝ ասելով. «Սիրտս բխեց

<sup>1</sup> Գղտ 6, 14

<sup>2</sup> Լատիներէնում, «humilitas» («խոնարհութիւն») բառը առաջացել է «humus» («հող») բառից, հետեւաբար՝ Ադամի համար խոնարհութիւն նշանակում է հողին կամ գետնին հաւասարում, այսինքն՝ յարում արարած լինելու անձնական ճշմարտութեանը:

<sup>3</sup> Մտթ 23, 12

<sup>4</sup> Սղմ 51, 19. Սրտի զղջումը (լատ. contritio), այսինքն՝ սեփական մեղքերի համար զղջման վշտով տրորուած ու փշրուած սրտի վիճակը, հնարաւոր է միմիայն խոնարհութեանը, որովհետեւ սա, հողին կամ գետնին հաւասարուելով, ընդունում է ոտնակոխ լինել՝ կոտրուելու ու փշրուելու աստիճան (լատ. teritur et conteritur):

<sup>5</sup> Սղմ 4, 3

<sup>6</sup> Սղմ 145, 16

Խօսքը բարի»<sup>1</sup>: Եկել է Կոյսի սրտից ներս, ինչպէս որ նոյն Կոյսին ասուում է. «Տէրը քեզ հետ է»<sup>2</sup>: Մեր առջեւ բացել է Իր սիրտը, այն օրից ի վեր՝ ինչ փառազրկեց Ինքն Իրեն, մեզ խոնարհուածեան օրինակ տալու նպատակով: Իր համար ուզեց ունենալ մեր սիրտը, երբ ցոյց տուեց՝ թէ սրտերի սիրահարն է եւ նրանց բնակիչը, ասելով. «Իմ վայելքը մարդկանց որդիների հետ լինելն է»<sup>3</sup>: Գիտենք, ապա, որ Նա՝ որ ծնւում է Հօր սրտից, բնակւում է Կոյս մօր սրտում, խօսում է սրտից, յայտարարում է՝ թէ սիրում է սրտերի բնակավայրը, եւ ինչպէս որ տեսանելի է միմիայն մաքուր սրտերի համար՝ այնպէս էլ լսելի ու զգալի է միմիայն մաքուր սրտերի համար: Ուրեմն, եթէ սրտով օժտուած մարդիկ էք, եթէ ձեր ներաշխարհում սիրում էք լսել Յիսուսի՝ սրտերի բնակչի ձայնը, անհրաժեշտ է՝ որ ամենայն զգուշութեամբ պահպանէք ձեր սրտերը, ինչպէս գրուած է. «Ամենայն զգուշութեամբ պահպանիր սիրտդ»<sup>4</sup>: Սրտի այս պահպանութիւնը գործադրել եւ սրտերի բնակչին իր մէջ հիւրընկալել էր նա՝ ով ասում էր. «Սրտիս Աստուածը, Աստուած ժողովուրդեանս բաժինն է յաւիտեան»<sup>5</sup>: Ահա՛ թէ որտեղից է գալիս, ահա՛ թէ որտեղից է ելել Նա՝ ով սրտերի կեանքն է, սրտով օժտուած ուսուցիչը. սրտից: Այս իսկ պատճառով, պարտաւոր ենք մեր սրտերից դուրս վտարել ամէն անմաքութիւն, որպէսզի կարողանանք զգալ միակ քաղցրութիւնը եւ եզակի բերկրանքը: Ծղմարիտ ողջախոհութիւնը թող ջնջի մարմնի ցանկութիւնը, լուրջ կանոնապահութիւնն ու հոգեւոր մաքրութեան փափաքը թող հեռացնեն աչքերի ցանկութիւնը, իսկ աղքատութեան սէրն ու աշխարհային պատուի արհամարհանքը թող յաղթեն այս կեանքի հպարտութեանը: Ահա, ճիշտ այս նպատակով է Խօսքը գալիս մարմնով, այս նպատակով է ընտրում գալու այսօրինակ կերպը. որպէսզի Կոյսի արգանդում Իրեն միաւորած մարմնում՝ մարմինը հրաժարուի մարմնական կեանքի սիրուց: Աւելի լաւ կերպով չէր կարող Խօսքի աստուածութիւնը անմարմին կերպով պարզեւուել մարմնաւոր մարդկանց, ո՛չ էլ աւելի լաւ կերպով կարող էր մարդկանց մէջ մեռնել մարմնաւոր իրողութիւնների սէրը, եթէ մարմին առած Խօսքի ներկայութիւնը նրանց չկրթէր երկնային իրողութիւնների շուրջ: Այլեւս ի՞նչ կարող ենք ասել մի այսպիսի մեծ ուսուցչի ուսուցումների վերաբերեալ: Նրա ուսմունքի հաւաստիութեան փաստն են ինչպէս Նրա անհակաճառելի ճշմարտութիւնը, այնպէս էլ երկնային իմաստութեան վսեմութիւնը: Սա փաստում են Նրա կեանքը, որին վկայում է աւետումը, արդարութեան գործերը եւ ողորմութեան անսահման խորութիւնները: Չարչարանքների հնազանդութիւնն են փառաւորում գերազանց անմեղութիւնն ու արտակարգ համբերութեան խոնարհութիւնը:

Ինչ վերաբերւում է մնացածին, Նա վերադարձել է այնտեղ՝ որտեղից եկել էր: Մարդկային բնութիւնը, որին միանալով՝ հրեշտակներից վար խոնարհուեց, մահուան դէմ Իր յաղթանակով՝ բարձրացրեց բոլոր հրեշտակներից վեր, մինչեւ բազմելը Հօր աջ կողմում: Ահա, այնտեղ ենք, այնտեղ ենք ապրում, այնտեղ ենք թագաւորում: Ամբողջովին թագաւորում ենք այնտեղ՝ ուր ամենայն ցնծութեամբ մաղթում ենք՝ որ թագաւորի մեր բնութիւնը: Ոչ մի կերպ չենք կարող հեռանալ այնտեղից՝ ուր է մեր լաւագոյն անդամը, այսինքն՝ գլուխը: Ա՛հ, երանելի ենք մենք՝ որ անդամներն ենք այսպիսի Գլխի, եթէ այս Գլխին յարենք հաւատքի միութեամբ եւ սիրոյ ընկերակցութեամբ: Յանձինս Նրա արդէն ստացել ենք խոստման գրաւականը, որովհետեւ նուազագոյն չափով անգամ չենք կասկածում խօսքերին, որ Նա ասում է Աւետարանում. «Կամենում եմ, Հայր, որ ուր ես եմ՝ այնտեղ լինի նաեւ իմ պաշտօնեան»<sup>6</sup>: Քանի որ Նա խոստացել է Իրեններին պարգեւել շնորհը եւ փառքը, եւ արդէն պարգեւել է շնորհը,

<sup>1</sup> Մղմ 45, 2  
<sup>2</sup> Ղկս 1, 28  
<sup>3</sup> Առկ 8, 31  
<sup>4</sup> Առկ 4, 23  
<sup>5</sup> Մղմ 73, 26  
<sup>6</sup> Յվհ 12, 26

վստահ եղէք՝ որ պատրաստում է նաեւ փառքը բոլոր նրանց համար՝ ովքեր այժմ բարութեամբ գործի են դնում շնորհը: Բայց այնուամենայնիւ, շնորհի ժամանակաշրջանում նաեւ, սրբերը գուրկ չեն փառքից, այլ Պօղոս Առաքեալի հետ պարծենում են իրենց խղճի վկայութեամբ եւ ասում են. «Մեր փառքը սա է. մեր խղճի վկայութիւնը»<sup>1</sup>: Իրականում, որպէսզի ոչ ոք յոյսը չափազանց չդնի փառքի խոստման վրայ, ո՛չ էլ գոռոզանայ՝ շնորհի ասպարէզում կնքած յաջողութիւնների համար, պէտք է շարունակ յիշի աստուածային սպառնալիքը. «Վա՛յ, – ասում է, – յուսահատներին»<sup>2</sup>: Իսկ Աւետարանում. «Վա՛յ ձեզ, հարուստներ, որ արդէն ստացել էք ձեր մխիթարութիւնը: Վա՛յ ձեզ, որ այժմ ծիծաղում էք, որովհետեւ ողբալու ու արտասուելու էք»<sup>3</sup>: Նա, ուրեմն, որ այժմ հեղերին ու խոնարհներին մխիթարում է իրենց խղճի վկայութեամբ եւ որոշ կերպով՝ նաեւ փառքի վայելումով, աչքերի արտասուք եւ ատամների կրճատում է սպառնում ե՛լ նրանց՝ ովքեր լքում են առաքինութիւնները, ե՛լ նրանց՝ ովքեր յոյսները դնում են ներկայ կեանքի մխիթարութիւնների վրայ:

Սրանք են, ո՛վ որդիներ, ուսուցչի վերաբերեալ սովորելիք եւ իմանալիք բաները, Նրա՝ ումից է հարկաւոր սովորել այն ամէնը՝ ինչը որ օգտակար է իմանալ: Իրօք, Նրանից ոչինչ չի սովորում նա՝ ով չի կամենում գործադրել սովորելու կերպն ու միջոցը: Սովորելու կերպը մատնանշում է նոյն ինքն ուսուցիչը, երբ ասում է. «Ձեր վրայ վերցրէք իմ լուծը»<sup>4</sup>. Իր լուծը մեր վրայ վերցնելն, իրօք, սովորելու կերպին հետեւելն է: Իսկ ո՞րն է Իր լուծը, եթէ ոչ՝ Իր սէրը: Լուծը, կ'ասէի, Իր յարատեւ ու հաւատարիմ, սուրբ ու անուշ, ուղիղ ու քաղցր սէրն է: «Իմ լուծը, – ասում է, – քաղցր է եւ իմ բեռը՝ թեթեւ»<sup>5</sup>: Ո՛վ սիրոյ լուծ, քանի՛ցս քնքշօրէն ես կշռում: Քանի՛ցս քաղցրօրէն ես բռնում: Քանի՛ցս նրբօրէն ես կապում: Քանի՛ցս թեթեւօրէն ես սեղմում: Այս սէրը, այս լուծը, այս պատճառով է կոչւում լուծ. որովհետեւ ամուսնական քնքուշ զօղով միմեանց միացնելով Խօսքը եւ հոգին, չի թոյլատրում՝ որ որեւէ ամուսնալուծութեամբ միմեանցից բաժանուեն<sup>6</sup>: Չե՞ս զգում հոգիդ որպէս պարմանուհի՝ հաւատքի նորութեան ներգործութեամբ, լուացուած՝ խոստովանութեամբ, ամբիժ՝ անմեղութեամբ, պարկեշտ՝ ողջախոհ երկիւղի ամօթխածութեամբ, հասուն՝ խոնարհութեամբ, պատրաստ՝ կանոնապահութեան համար, վարդազոյն՝ համբերութեամբ<sup>7</sup>, զուարթ՝ Աստծոյ եւ մերձաւորի սիրով, նուրբ՝ բարեպաշտութեամբ, արդարութեան պատմութեանով զարդարուած, Աստծոյ Խօսքի հետ հաւատքի դաշինքով կարծես նշանուած: Ա՛հ, երբ հոգին հասած կը լինի այս վայրը, երբ մտած կը լինի գինու այս մառանը, ի՞նչ չի կարողանայ ճանաչել Փեսայի վերաբերեալ, կամ՝ Փեսան ինչպէ՞ս կը կարողանայ թաքնուել Իր սիրուհուց: Այստեղ երջանիկ հոգին այլեւս հանգստանում է եւ ստանում է պտուղները կանոնապահութեան, որովհետեւ այսուհետեւ ենթակայ չէ սովորելու յոգնութեանը: Այս վայրը գեղեցիկ է՝ տեսնելու, ընդարձակ է՝ բնակուելու եւ խաղաղ է՝ հանգստանալու համար: Երբ հոգին կը հասնի այնտեղ եւ կը մտնի այս երանելի

<sup>1</sup> 2Կր 7, 12

<sup>2</sup> Սիր 2, 14

<sup>3</sup> Ղկս 6, 24-25

<sup>4</sup> Մտթ 11, 29

<sup>5</sup> Մտթ 11, 30

<sup>6</sup> Դժուար է հայերէնի վերածել այն բառախաղը, որ մեր հեղինակը գործածում է այստեղ. կոչւում է «լուծ» («jugum»), որովհետեւ լծում կամ միացնում է («jungens») «ամուսնական զօղով» («coniugium») Խօսքը եւ հոգին: Այդ միութիւնն արտայայտում է, հետեւաբար, երկուսն էլ միեւնոյն լծի տակ լինելը, որը Քրիստոսի սիրոյ քաղցր ու անլուծարելի լուծն է:

<sup>7</sup> Երեսի վարդերանգ գոյնը, այստեղ՝ կարմիրի փոխարէն, խորհրդանշում է արիւնը եւ կեանքը: Քրիստոնէական աւանդութեան համաձայն, կարմիրը կամ վարդազոյնը մատնանշում է Քրիստոսի չարչարանքները (որոնք լատիներէն ասւում են նաեւ «patientia», համբերութիւն), որոնց կանչուած է մասնակցելու հոգին՝ Քրիստոսի հարսը:

անդորրից ներս, ուրախութեամբ եւ օրհնութեամբ կ'աղաղակի. «Սա՛ է իմ հանգիստը յաւիտեանս յաւիտենից ...»<sup>1</sup>: Յայնժամ, փարուելով իր Սիրեցեալին եւ ամբողջովին Նրան միանալով, ինչպէս որ չսիրեց Նրանից բացի ուրիշ ոչ ոքի, այնպէս էլ չի կարողանայ եւ ո՛չ էլ կարիքը կ'ունենայ ուրախանալու ուրիշ ինչ որ մէկի կամ ուրիշ ինչ որ մի բանի համար: Յայնժամ, գեղեցիկ եւ նուրբ, եւ ամբողջովին քնքշանք սփռելով, սքանչելի գուարթութեամբ կ'երգի այն հոգեպարար հարսներգը. «Սիրելին իմ ինձ, եւ ես նրան»<sup>2</sup>: Նա է լինելու հոգու լիագեղ ուրախութիւնը, Նա է լինելու հոգու ամբողջական փառքը:

Երբ կը հասնէք այդ հանգստի երանութեանը, կա՛մ փափաքով երբեմն եւ կարճ տեսողութեամբ կեանքի սահմանն անցնելով, կա՛մ հոգու մեծ յափշտակութեամբ, կա՛մ էլ մեծ երանութեամբ՝ կեանքի վախճանի միջոցով, աղօթեցէ՛ք, աղաչում եմ ձեզ, որպէսզի ես նոյնպէս մասնակից լինեմ ձեր փառքին, ես՝ որին այստեղ որպէս ընկեր ունէք եղբայրական սիրոյ մէջ: Մինչ այդ, հոգատար եղէք հոգու առաքինութեան պահպանման գործում, որովհետեւ առաքինութեան անզաղար գործադրումով է միայն հնարաւոր հասնել երկնային վարձին:

Այժմ, ուրեմն, քանի որ ձերն եմ – որովհետեւ իմն եմ համարում այն ամէնը՝ որ ունէք ձեզնում բարի – այժմ իմ համար եւս հոգատար եղէք ի Քրիստոս, իմ՝ որ Նրա առջեւ չեմ կարող չյիշել ձեզ:

Ողջ եղէք:

---

<sup>1</sup> Սղմ 132, 14

<sup>2</sup> Երգ 2, 16

# ՆԱՄԱԿ ԻԹ.

Ի Ելեմի թեմի «Գ.» աւագ սարկաւագին :  
Լուսնի մասին :

Ի Քրիստոս սիրեցեալ բելէմացի «Գ.» աւագ սարկաւագին, մեղապարտ եղբայր Ադամից ողջոյն:

Շարունակական խնդրանքներդ, ո՛վ սիրեցեալ եղբայր, պահանջում են ինձնից մի բան, որ խոստովանում եմ՝ յանձն եմ առնում սիրտս երկիւղով լի, որովհետեւ չունեմ ո՛չ հոգու մի այնպիսի առաքինութիւն, որով կարող լինեմ ունենալու [տուեալ նիւթի] փորձառութիւնը, ո՛չ էլ բաւական ճանաչողութիւն, որով ի զօրու լինեմ ըմբռնելու [տուեալ նիւթի ծածուկ իմաստները]: Եւ անշուշտ, մէկը՝ որին պակասում են այս երկու բաները, չի կարող ունենալ գովասանքի արժանի խօսքի ուժը, յատկապէս երբ իր հոգու խորքում չունի այն՝ որի մէջ կը կարողանար թաթախել լեզուի գրիչը, եւ երբ կեանքն անգամ չունի համն այն բանի՝ որ բացատրում է ճառախօսութեամբ: Խստականոն կենցաղավարութեան եւ լուութեան օգտակարութեան մասին ինձնից գրաւոր ուսուցումներ խնդրելու փոխերէն, հետեւաբար, աւելի լաւ կ'անէիր՝ եթէ ինձ յորդորէիր [սիրելու եւ պահպանելու] լուութիւնը:

Անկասկած, փնտռածդ իրականութեան ծածուկ իմաստը գտնում են միմիայն լուութեան սիրահար յաճախորդները, անդորրի եռանդուն խուզարկուները, որոնց փափաքների նպատակակէտն է լուութիւնը՝ արդարութեան պաշտամունքը: Բայց այնուամենայնիւ, թէեւ ես ինքս արժանի չեմ նմանօրինակ շնորհի, թերեւս քո ջերմեռանդութիւնը արժանի կը լինի նաեւ այս ամուլ ծառի վրայ գտնելու փնտռուած պտուղը: Այսպիսով, ինձ՝ որ խօսում եմ լուութեան մասին, մօտ կը լինի լուութեան մտերիմ ընկերը՝ Երրորդութիւնը, որ մանուկների ու կաթնակերների բերանից է սովոր ստանալու Իր օրհնութիւնը:

Որեւէ մէկը, որ որպէս աշակերտ յաճախում է մարմնացած Խօսքի դպրոցը, պարտաւոր է, ուրեմն, սիրել եւ պահպանել լուութիւնը, որովհետեւ իր համար որպէս ուսուցիչ է ընտրել Աստուծոյ Խօսքը: Քրիստոսն, իրօք, որ ուսուցիչն է խոնարհների, չի կոչւում միայն «Հօր Խօսք», որովհետեւ Նրա կամքն ամենակարող է, այլ կոչւում է նաեւ «Խօսք», որովհետեւ միշտ պահանջում է ունկնդրում: Նա՛ որ լսում է, ունկնդրում է. նա՛ որ ունկնդրում է, լուում է. նա՛ որ լուում է, ունկնդրում է ինչ որ մէկի: Միշտ, հետեւաբար, Հայրը լուութիւն է պահանջում բանական արարածից, որին շարունակ խօսում է այդ Խօսքը: Այդ Խօսքի անպատում ծնունդը միակ հնարաւոր կրթութիւնն է բանական արարածի համար, եւ միայն հոգեւոր մանկութիւնն<sup>1</sup> է նրան ընծայում պահանջուած ունկնդրութեան յարգանքը, որովհետեւ լուութեան ու անդորրի մէջ ազատ է պահում անմեղութիւնը:

Միշտ Հայրը խօսում է մեզ, մինչ միշտ ծնում է անճառելի Խօսքը. արարածն, իր հերթին, պարտաւոր է շարունակական լուութիւն՝ Նրա յաւիտենական Խօսքին: Ամենակարող Խօսքին չհասկանալու եւ չսիրելու փաստ է տալիս նա՛ ով առանց երկիւղի հեռացնում է Նրանից իր սրտի ականջը, ինչպէս գրուած է. «Լեզուանի մարդը ուղիղ չի

<sup>1</sup> Մանկութիւն (infanzia) բառով, հեղինակն այստեղ արտայայտում է երկու իմաստ. առաջինը, որ սերտօրէն կապուած է լատիներէն տուեալ բառի լեզուաբանական նշանակութեանը, մատնանշում է նորածին մանկան վիճակը՝ որ չի խօսում (in-fans նշանակում է ան-խօս): Երկրորդ իմաստը, հոգեւորը, ուղղակիօրէն բխում է առաջինից. ճիշտ որովհետեւ չի խօսում, մարդն ի վիճակի է լսելու: Ունկնդրութեան այս վիճակը այսպիսով դառնում է «հոգեւոր մանկութիւն» արտայայտութեան միակ ճշմարիտ իմաստը:

քայլում երկրի վրայ»<sup>1</sup>. երկրի վրայ ուղիղ չի քայլում նա՝ ով արժանի չէ ընկալելու եւ ըմբռնելու աստուածային խօսքերի խորին իմաստը: Իսկ սրան արժանի չէ լեզուանի մարդը, որ մինչ մէկը միւսի ետեւից արտասանում է դատարկ բաներ, նուազագոյն չափով անգամ չի ըմբռնում այն՝ ինչը որ Խօսքի Հոգին հաղորդում է բոցեղէն լեզուներով:

Տե՛ս՝ թէ ամբողջ Երրորդութիւնն ինչպէս է վաւերացնում լռութեան կանոնը: Հայրը սիրում է լռութիւնը, որովհետեւ մինչ իր իսկ էութիւնից անճառաբար ծնում ու պարգեւում է Իրեն յաւիտենակից Խօսքը, այդ ծածուկ ճշմարտութեան ըմբռնման համար անպայման պահանջում է սրտի ուշադիր ունկնդրումը. այս իսկ պատճառով, Սաղմոսում ասում է. «Սիրտս բխեց Խօսքը բարի»<sup>2</sup>:

Նաեւ Խօսքն Ինքը իրաւացիօրէն պահանջում է լռութիւն պահել Իր առաջ, որովհետեւ մինչ Իրենում բովանդակում է իմաստութեան ու գիտութեան բոլոր գանձերը, դրանք մեր ականջներից ներս թափանցել տալու համար ընդունում է, որպէս մեզ ծանօթ լեզու, մեր մարդկութիւնը. սրա համար էլ Մովսէսն ասում է. «Մօտ է Խօսքը, չըթունքներիդ վրայ եւ սրտիդ մէջ»<sup>3</sup>: Իսկ Յովհաննէս Աւետարանիչը. «Խօսքը մարմին եղաւ եւ բնակուեց մեր մէջ»<sup>4</sup>:

Խօսքի Հոգին նոյնպէս կամենում է, որ բացարձակ լռութիւն եւ ունկնդրում ընծայենք Իրեն, երբ պատմելով համառօտուած Խօսքը<sup>5</sup> – որն, հետեւաբար, առաւել մութ է՝ քան առաջ – կարծես «մեկնաբանութիւնների» միջոցով՝ բացայայտեց Իրեն ընդմէջ բոցեղէն լեզուների. «մեկնաբանութիւն», իրօք, նշանակում է լեզուներ<sup>6</sup>: Սուրբ Հոգին, յիբաւի, համառօտուած Խօսքի – այսինքն՝ ծառայի կերպարանք առնելու աստիճան խոնարհուած Խօսքի – դժուարիմացութեան մեկնաբանութիւնը կարծես տուեց, երբ [հրեղէն] լեզուների տեսանելի հեղումի միջոցով՝ նոյն Ինքն Խօսքի աշակերտների սրտերից ներս դրոշմեց այդքան վսեմ խորհուրդի խորին իմաստը: Իր այս մեկնաբանողի եւ պատմողի մասին, որ է Սուրբ Հոգին, Հօր Խօսքն այսպէս է արտայայտւում. «Նա, – ասում է, – փառաւորելու է ինձ, որովհետեւ ինձնից է վերցնելու»<sup>7</sup>: Եւ կրկին. «Երբ Մխիթարիչը կը գայ, որին ես կ'առաքեմ Հօրից, նա կը վկայի ինձ»<sup>8</sup>: Իրողութիւնն, ապա, որ Սուրբ Հոգին սիրում է լռութիւնը, վկայում է Տէրը մարգարէի միջոցով. «Ո՞ւմ վրայ, – ասում է, – կը հանգչի Հոգիս, եթէ ոչ միայն նրա՝ ով խոնարհ է ու հեզ եւ ով երկնչում է խօսքերիցս»<sup>9</sup>: Ուր, իսկապէս, ներկայ են խոնարհութիւնն ու հեզութիւնը, այնտեղ անպատճառ, լռութեան հոգեւոր անդորրի գրկում, միասին խնջոյք են անում խաղաղութիւնն ու հանգիստը: Խաղաղութեան ընկերը, անդորրի ընկերն է լռութիւնը, եւ սրտի համար շաբաթ օրը չի կարող գալ՝ մինչ շրթունքների աշխատանքը չի մեղմացւում

<sup>1</sup> Սղմ 140, 12

<sup>2</sup> Սղմ 45, 2

<sup>3</sup> 2Օր 30, 14

<sup>4</sup> Յվհ 1, 14

<sup>5</sup> «Համառօտուած Խօսք» արտայայտութիւնը առաջացել է Եսայի 10, 23 հատուածից, որը մէջբերուած է նաեւ Պօղոս Առաքեալի կողմից՝ Հռմ 9, 28 հատուածում, եւ գրաբարում հնչում է այսպէս. «Զի Բան մի հակիրճ եւ համառօտ արդարութեամբ, գԲանն համառօտ արասցէ Տէր զօրութեանց ընդ ամենայն տիեզերս»: Այս հատուածը, լինի Պօղոս Առաքեալը՝ թէ Եկեղեցու բոլոր Հայրերը, բացատրել են քրիստոսաբանական իմաստով. Հօր «Համառօտուած Խօսքը» Յիսուս Քրիստոս Ինքն է, համառօտուած եւ թանձրացած՝ մարմին դառնալու աստիճան:

<sup>6</sup> Հայերէնում դժուար է արտայայտել հեղինակի մայրենի լեզուի բառերի բոլոր իմաստները: Բայց մեր պարագային էլ թերեւս կարող ենք որոշ նմանութիւն գտնել, որովհետեւ «մեկնաբանել» նշանակում է «խօսքը բացատրել» (գրաբարում «բան» նշանակում է «խօսք»), հետեւաբար՝ նոյնպէս խօսել, լեզուն գործածել:

<sup>7</sup> Յվհ 16, 14

<sup>8</sup> Յվհ 15, 26

<sup>9</sup> Ես 66, 2

լռութեան կանոնապահութեամբ: Այստեղից է բխում այն փաստը՝ որ Սուրբ Հոգին անուանուում է «եօթնակերպեան», որովհետեւ հանգստի եօթ օրերի ընթացքում է պատրաստում ու պատուիրում սրտի շաբաթ օրը, որպէսզի ազատօրէն տրամադրուի խօսքի ունկնդրմանը: Հանգստի այդ եօթ օրերը Սուրբ Հոգու եօթ պարգեւներն են, որոնք թուարկում է Եսային<sup>1</sup>, որոնք կարծես եօթ լռութիւններ են, որովհետեւ հոգու խորքում ստիպում են լռել եւ դադարել մոլութիւնների բազմապատիկ տեսակները: Իրօք, եօթ թիւը մատնանշում է բազմապատիկ զանազանութիւն, իսկ դադարելուն ասում է նաեւ լռել: Ուրեմն, կարծես եօթ լռութիւններ են, որ իրենց հեղինակութեամբ՝ պարտադրում են մոլութիւններին լռել: Լռութիւններ են, որ մինչ թմրեցնում են մեղքերի յանցանքները եւ մեղմացնում են մոլութիւնների ժխորը, սրտի ականջներն ընդունակ են դարձնում ըմբռնելու եւ ընդունելու մարմնացած խօսքի խորհուրդները:

Իրականում, այս բոլոր լռութիւններից՝ ամենակարող խօսքն իր համար ընտրում է միջին մէկը, որի մօտ առաւել ընտանութեամբ է գալիս թագաւորական գահից, նա՛ որ զօրութեան հոգիով գերազանցում ու յաղթահարում է այն ամէնը՝ որ հակառակ է մաքրութեանը. «Մինչ, – ասում է, – կէսգիշերուայ<sup>2</sup> լռութիւնը պատել էր ամէն ինչ, ամենագոր խօսքը եկաւ արքայական գահերից»<sup>3</sup>, որովհետեւ Միջնորդը թագաւորական գահին արժանի է նկատում նրան՝ ով մէջտեղում տեղաւորուելով, զօրութեամբ դիմադրում է մեղքերին: Միմիայն զօրութեան հոգու շնորհիւ է հնարաւոր լռութիւն պարտադրել մոլութիւններին, եւ ուրիշ տեղ հնարաւոր չէ, այլ միայն՝ մէջտեղում, որովհետեւ առաքինութիւնը իմաստունների կողմից անուանում է միջին կէտ, երկու միմեանց հակառակ ծայրայեղ մոլութիւնների միջեւ: Անհրաժեշտ է, իրօք, հոգու առաքինութիւնը, որպէսզի կարողանաս բռնութիւն գործադրել երկնքի արքայութեան նկատմամբ, տիրել նրան բռուն անյազութեամբ, եւ ականջներդ չար ունկնդրումներից հեռացնելով՝ ընդունակ դարձնես միմիայն մարմնացած խօսքի ունկնդրմանը եւ պատուիրանների հանդէպ հնազանդութեանը:

Լռութիւնը այս միջին կէտն է, որի մօտ իջնում է Միջնորդ ամենակարող խօսքը, եւ փոքրերին հասանելի լինելու համար որպէս փոքր ու մարդածին հաստատուելով աշակերտների մօտ, կարողանում է ներկայացնել իրեն որպէս ուսուցիչ նրանց՝ ովքեր չեն խօսում: Այդ մանուկներն, իրօք, ընդունակ չեն խօսելու, այսինքն՝ լռակեաց են, որ նշանակում է՝ թէ լռութեան մէջ սպասում են Աստծոյ փրկութիւնը. «Լաւ է, – ասում է մարգարէն, – լռութեան մէջ սպասել Աստծոյ փրկութիւնը»<sup>4</sup>: Աստծոյ փրկութիւնը մարմնացած խօսքի խորհուրդն ու շնորհն է, որին ունկնդրելու համար իրենց ականջները ընդունակ չեն դարձնում եւ որին նուազագոյն չափով անգամ չեն լսում նրանք՝ ովքեր չեն չորացնում Եգիպտոսի Ծովի լեզուն<sup>5</sup>, այսինքն նրանք՝ ովքեր սահմանների մէջ չեն փակում աւելորդ լեզուանիութեան հոսանքը եւ շատախօսութիւնից հեռու չեն պահում իրենց լեզուն. «Ով ազատ է թողնում ջրերը, – ինչպէս ասում է Աստուածաշունչը, – ծնունդ է տալիս վէճերին»<sup>6</sup>: Ջրերը ազատ թողնել՝ նշանակում է չարգելակել Եգիպտոսի Ծովի լեզուն, այսինքն՝ նուազագոյն չափի արգելքներ անգամ չդնել այն հոսանքի առաջ,

<sup>1</sup> Հմմտ. Ես 11, 2

<sup>2</sup> Հեղինակն այստեղ «կէսգիշեր» բառի իմաստում ընդգծում է գիշերուայ կէտ, մէջտեղ, միջին մաս նշանակութիւնը:

<sup>3</sup> Իմտ 18, 14-15

<sup>4</sup> Ողբ 3, 26

<sup>5</sup> Այստեղ Ադամը խաղի է դնում «լեզու» բառի կրկնակի իմաստը լատիներէնում. առաջին իմաստը ամենասովորականն է, որ մատնանշում է խօսելու մարմնական անդամը. երկրորդը մատնանշում է հողի կամ ծովի բարակ մի շերտ (գրեթէ ինչպէս «լեզուակ»ը հայերէնում): Իսկ քանի որ «ծով» («mare») բառը լատիներէնում առաջացել է «դառն» («amaro») բառից, իսկ «Եգիպտոս»ը՝ «խաւար»ից, հետեւում է՝ որ «Եգիպտոսի ծովի լեզու» նշանակում է խաւար սրտի դառնացնող լեզու, որն արտասանում է դառն խօսքեր՝ որոնք դառնացնում են լսողներին:

<sup>6</sup> Առկ 17, 14

որ «դառնացնում է»: Ծովից աւելի ուռած, տատանուող ու անհաստատ ի՞նչ կայ: Ի՞նչ կայ աւելի դառն՝ քան վէճերը: Իսկ ո՞րն է Եգիպտոսի Ծովը, եթէ ոչ այն սիրտը՝ որ խաւար է եւ դառնացնող: «Եգիպտոս», իսկապէս, նշանակում է «խաւար»: Եգիպտոսի Ծովի ջրերը, – ասում էի, – ազատ է թողնում նա՛ ով լեզուի ու բերանի շարժումներով տարածում է սրտի դառնութիւնն ու փքուած ունայնամտութիւնը: Քեզ չի՞ թւում, որ վէճերը հակառակ են մարմնացած խօսքի խորհուրդին, հակառակ են կանոնապահութեան պատուիրանին, հակառակ են խղճի վկայութեանը, խօսակցութեան սահմանների ապօրինի գերազանցումն են, որով վէրքեր են հասցնում լուութեան դէմքին:

Անշուշտ, Աստծոյ խօսքը իւրաքանչիւր մարդու համար որպէս լուութեան կանոն հաստատեց, երբ յայտնեց եւ նախագգուչացրեց՝ որ ամէն պարապ խօսքի համար հաշիւ է պահանջուելու դատաստանի օրը: Լուութիւնը, յիւրաւի, բացարձակ կեպով չխօսելը չէ, այլ պահապան դնելը բերանիդ վրայ եւ շրթունքներիդ վրայ ընտրողութեան դռներ հաստատելը, որպէսզի խօսես ինչպէս եւ երբ պատշաճ է, ուր եւ որքան հարկաւոր է, այն նիւթի մասին եւ այն բանի համար՝ որ վայել է: Եւ այսպէս, Տիրոջ ձայնը թող լինի ջրերի վրայ, որպէսզի Սիլովամի<sup>1</sup> ջրերը լինեն եւ անցնեն լուութեամբ, որպէսզի խօսքերիդ նախագահի Աստուած-խօսքը եւ լուութեան օրէնքով արգելակուի արագաշարժ լեզուի փոփոխական հոսանքը:

Հաւատքը, բանականութիւնը եւ աւանդութիւնը բազում անգամներ յանձնարարում են նրանց՝ ովքեր դաւանում են երկնային իմաստութեան հանդէպ սէրը, լուութեան կանոնը: Առաջին. որովհետեւ Աստծոյ իմաստութիւնը, մէկ ծայրից մինչեւ միւս ծայրը զօրութեամբ հասնելով, ամէն բան տնօրինում է քաղցր հանդարտութեամբ եւ լուութեամբ:

Երկրորդ. որովհետեւ իմաստութիւնն ինքը ընտրել է իր համար «խօսք» անունը, որով եւ ասում է. «Սկզբում էր խօսքը ...»<sup>2</sup>:

Երրորդ. որովհետեւ խօսքն ինքը մեր մարմնում յայտնուեց որպէս մանուկ, այսինքն՝ լուակեաց:

Չորրորդ. որովհետեւ իր վրայ վերցնելու համար մեր մանկութիւնը, ընտրեց լուութեան մի միջին ժամանակամիջոց:

Հինգերորդ. որովհետեւ, թէեւ իր մէջ էին թաքնուած իմաստութեան ու գիտութեան բոլոր գանձերը, ըստ մարմնի տարիքի հասնելով տասներկու տարեկանին, չուսուցանեց ժողովարանում, այլ խոնարհաբար ունկնդրեց օրէնքի մարդկանց ուսուցումները:

Վեցերորդ. որովհետեւ չարչարանքների մէջ լռեց՝ ինչպէս դառն է լուծում խուզողի առաջ:

Եօթներորդ. որովհետեւ նոյն խօսքի ձայնը, այսինքն՝ Յովհաննէս Մկրտիչը, լուութիւն պարտադրեց օրէնքին ու մարգարէներին. «Օրէնքն ու մարգարէները – իրօք – մինչեւ Յովհաննէսն էին»<sup>3</sup>:

Ութերորդ. որովհետեւ խօսքի Հոգին, երբ եկաւ հրեղէն լեզուների կերպարանքով, խօսքի աշակերտներին գտաւ լուութեան ու աղօթքի մէջ եւ յանկարծակի թնդիւնով՝ խայտանքով լցրեց նրանց սրտերը՝ ովքեր ունկնդրում էին:

Իններորդ. որովհետեւ նոյն խօսքի Հարսը, այսինքն՝ Եկեղեցին, ահա այս պատճառով երբեք չլքեց յաւիտենական հանգստի լուութիւնը եւ այս պատճառով ընծայեց իր սիրալիր ուշադրութիւնը. որովհետեւ լսել էր՝ թէ ինչ էր ասել իրեն Աստուածութիւնը. «Լսիր, ո՞վ

<sup>1</sup> Սիլովամի ջրերը (Սիլովամ երբայերէն նշանակում է առաքուած) մի աւազանի ջրերն էին, որ կառուցել էր Եգիպտոս արքան Ք.ա. Տրդ դարում, հին Երուսաղէմի հարաւային մասում: Տաղաւարահարաց տօնին, երբ յիշատակում էր՝ թէ ինչպէս էր Տէրը առաջնորդել իր ժողովրդին անապատի միջով, իսրայէլացիները ջուր էին վերցնում այդ աւազանից, որպէս մեսիական օրհնութիւնների խորհրդանշան: ՅվՏ 9, 6-7 Հատուածի Համաձայն, Յիսուս ի ծնէ կոյրին առաքում է աչքերը լուալու Սիլովամի աւազանի ջրով եւ վերջինիս աչքերը բացում են:

<sup>2</sup> ՅվՏ 1, 1

<sup>3</sup> ՂԿս 16, 16

դուստր, տես եւ ունկն դիր»<sup>1</sup>: Ունկն դիր՝ հաւատալու համար, որովհետեւ հաւատքը ծնւում է [աւետարանումը ուշադիր] լսելուց. տես՝ սիրելու համար, որովհետեւ սէրը առաջանում ու կատարւում է տեսութեան միջոցով. մօտեցրու սրտիդ ականջները՝ խոնարհութեան զգացումով հնազանդուելու եւ հնազանդութեան մէջ յարատեւելու համար: Լսիր այն ձայնը, որ աւետարանում է Փեսայիդ գալուստը, քանզի Նրա անունը ամենասփիւռ օծանելիք է. տես Սիրելիիդ զեղեցկութիւնը, որովհետեւ Նա է տեսքով ամենագեղեցիկը մարդկանց որդիների մէջ. եւ ուշադրութեամբ մօտեցրու սրտիդ ականջները, որպէսզի գործադրես Նրա պատուիրանները եւ հետեւես Նրա օրինակին: Նախ լսիր, ապա՝ տես. որովհետեւ հաւատքը առաջնորդում է դէպի հասկացողութիւն եւ հաւատքի շնորհիւ ենք հասնում տեսութեանը: Այսպիսով, Խօսքի Հարսին չի վայելում շատախօսել ու լեզու ծեծել, այլ՝ ունկնդրել եւ տեսնել, որովհետեւ չի կարող տեսնել՝ եթէ նախ չի ունկնդրում: Այս իսկ պատճառով, եթէ հեռանայ լռութիւնից՝ կը կորցնի նաեւ իր անուան շնորհն ու արժանապատուութիւնը, քանի որ «Եկեղեցի» նշանակում է «հաւաք» կամ «հաւաքուած». յիրաւի, հաւաքուած չէր լինի՝ եթէ կանչուած չլինէր, բայց չէր լսի իրեն ուղղուած կանչը՝ եթէ լռութեան մէջ ականջ չդնէր Խօսքի ձայնին: Խօսքի կանչը այն աստիճան է կամենում, որ իր աշակերտների հոգիներում բնակուի լռութիւնը, որ երբ առաքում է աշակերտներին քարոզելու, ճանապարհի ընթացքում արգելում է բարեւել անցորդներին. «Չողջունէք ոչ ոքի, – ասում է, – ճանապարհի երկայնքին»<sup>2</sup>:

Բացի սա, երբ Աստծոյ ժողովրդին տրւում է աստուածային օրէնքի պարգեւը, սկզբում եւեթ Իսրայէլին տրւում է նախազգուշացումը՝ Աստծուն լսելու եւ լռութիւն պահպանելու անհրաժեշտութեան շուրջ. «Լսիր, Իսրայէլ, – ասում է, – եւ լռիր. քո Աստուածը միակ Աստուածն է»<sup>3</sup>: Այս իսկ պատճառով, Խօսքի աշակերտը կա՛մ կեղծաւորութեամբ է անուանում իրեն Խօսքի աշակերտ, կա՛մ էլ ճշմարտութեամբ պահպանում եւ սիրում է լռութեան երգումը:

Այստեղ արդեօք ի՞նչ կարող են ասել նրանք՝ ովքեր ուխտել են – լինի վանական կեանքում՝ թէ կանոնական ընկերութեան<sup>4</sup> մէջ – նրանք՝ ովքեր իրենց լեզուն ու շրթունքները ընծայել են Աստծոյ Խօսքին եւ երգման յանձնառութեամբ հպատակուել են լռութեան կանոնապահութեանը, բայց այնուամենայնիւ՝ շարունակ ցրւում են շատախօսութիւնների մէջ եւ ամէն կերպ աշխատում են՝ չպահպանելու համար այն՝ ինչը որ ուխտել են: Ընդարտութիւն չկայ նրանց շրթունքների վրայ, որովհետեւ ունայն է նրանց սիրտը: Չի կարող ճշմարտութիւնը, որ մաքուր է, ներկայ լինել շրթունքների վրայ՝ որ խօսում են ունայնութեան առատութիւնից: Այսպէս է, յիրաւի, ասում Քրիստոս Տէրը, ամենագոր Խօսքը. «Բերանը խօսում է սրտի լիութիւնից»<sup>5</sup>: Ի՞նչ կարող են ասել նրանց մասին, ովքեր իժի թոյն ունենալով՝ շրթունքների ներքոյ անամօթաբար արտասանում են զազրելի բաներ, ծառայում են թունաւոր շարախօսութիւններին, չեն կարմրում ստելիս, երգմանազանց լինելիս, վիճելիս, շարունակ չար իմաստով մեկնաբանելիս այն ամէնը՝ որ բարի են տեսնում ուրիշների հոգում: Իսկապէս, բաց գերեզման է նրանց կոկորդը եւ կոկորդի գերեզմանից դուրս են հանում այնքան մեռելներ՝ որքան մահուան օրինակներ են տալիս ի վնաս ուրիշների, ամբարշտութիւններ խօսելով եւ գործադրելով:

<sup>1</sup> Սղմ 45, 11

<sup>2</sup> Ղկս 10, 4

<sup>3</sup> Հմմտ. 2Օր 6, 4

<sup>4</sup> Կանոնականները քահանաներ էին (ի տարբերութիւն վանականների, որոնք մեծամասնութեամբ սովորաբար աշխարհականներ էին), որ յատկապէս մեծ քաղաքների Մայր Եկեղեցու կողքին, Եպիսկոպոսի շուրջը հաւաքուած եւ մի Սահմանադրութեան ներքոյ վարում էին հասարակաց մի կեանք, պահպանելով հանդերձ իրենց հովուական գործունէութիւնը: Կանոնական այս քահանաների կեանքին ձեւ ու կերպարանք է տուել Սբ. Օգոստինոսը, որով այդ ընկերութիւնները մեծ մասամբ հետեւում են նրա կանոններին եւ կոչւում են «Սբ. Օգոստինոսի կանոնականներ»:

<sup>5</sup> Ղկս 6, 45

Այս բաները, սիրեցեալ եղբայր, առայժմ թող բաւարար լինեն քեզ լռութեան օգտակարութեան մասին: Իսկ եթէ չեն բաւարարում ջերմեռանդութիւնդ, այնուամենայնիւ գերազանցում են փոքրկութեանս չափը: Արդէն բաւական է, որ ջանանք ապրել լռութիւնը եւ մենք ինքներս պահպանենք այն՝ ինչ յանձնարարում ենք, առանց լռելու օրհնութիւնները Նրա՝ որի ձայնին է սպասում մեր լսողութիւնը, այսինքն՝ ամենակալ Յիսուս Քրիստոս, որ ապրում է ու թագաւորում յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

